

**Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 1994 թվականի մայիսի 30-ի 94/22/ԵՀ
հրահանգ**

**Ածխաջրածինների հետախուզման, երկրաբանական որոնման և արդյունահանման
համար թույլտվությունների տրամադրման և օգտագործման պայմանների մասին**

Պաշտոնական տեղեկագիր, L 164, 30.06.1994թ., էջեր 0003 – 0008

Ֆիննական հատուկ հրատարակություն. գլուխ 6, հատոր 4, էջ 0237

Շվեդական հատուկ հրատարակություն. գլուխ 6, հատոր 4, էջ 0237

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՊԱՌԼԱՄԵՆՏԸ ԵՎ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ,

հաշվի առնելով «Եվրոպական համայնքի հիմնադրման մասին» պայմանագիրը և, մասնավորապես, դրա 57(2) հոդվածի առաջին և երրորդ նախադասությունները, 66-րդ և 100(ա) հոդվածները,

հաշվի առնելով Հանձնաժողովից ստացված առաջարկը (1),

հաշվի առնելով Տնտեսական և սոցիալական հարցերով կոմիտեի եզրակացությունը (2),

գործելով Պայմանագրի 189բ հոդվածում նշված ընթացակարգին համապատասխան (3),

քանի որ ներքին շուկան իրենից ներկայացնում է առանց ներքին սահմանների տարածք, որտեղ ապահովվում է ապրանքների, ծառայությունների, անձանց և կապիտալի ազատ տեղաշարժը. քանի որ դրա գործունեության համար պետք է ընդունվեն անհրաժեշտ միջոցներ,

քանի որ 1986 թվականի սեպտեմբերի 16-ի իր որոշման մեջ (4) Խորհուրդը որպես Համայնքի և անդամ պետությունների էներգաքաղաքականության նպատակ սահմանեց էներգիայի ներքին շուկայի ավելի սերտ՝ խոչընդոտներից զերծ ինտեգրումը առևտրին՝ նպատակ ունենալով բարելավելու մատակարարման անվտանգությունը, նվազեցնելու ծախսերն ու բարելավելու տնտեսական մրցակցությունը,

քանի որ Համայնքը ածխաջրածինների մատակարարման հարցում մեծապես կախված է ներմուծումներից. քանի որ, հետևաբար, խորհուրդ է տրվում խրախուսել Համայնքում տեղակայված ռեսուրսների լավագույնս հնարավոր հետախուզումը, երկրաբանական որոնումն ու արդյունահանումը,

քանի որ անդամ պետություններն իրենց տարածքում գտնվող ածխաջրածնային ռեսուրսների նկատմամբ ունեն ինքնիշխանություն և ինքնիշխան իրավունքներ,

քանի որ Համայնքը հանդիսանում է Ծովային իրավունքի մասին ՄԱԿ–ի կոնվենցիայի ստորագրող կողմ,

քանի որ անհրաժեշտ է քայլեր ձեռնարկել՝ ապահովելու համար ածխաջրածինների հետախուզման, երկրաբանական որոնման և արդյունահանման հետ կապված գործողությունների՝ խտրականությունը բացառող մատչելիությունը և ծավալումը այնպիսի պայմաններով, որոնք նպաստում են այս սեկտորում ավելի մեծ մրցակցությանը՝ դրանով իսկ խթանելով անդամ պետություններում գտնվող ռեսուրսների հետախուզումը, երկրաբանական որոնումն ու արդյունահանումը և ամրապնդելով էներգիայի ներքին շուկայի ինտեգրումը,

քանի որ, այս նպատակով, անհրաժեշտ է սահմանել ընդհանուր կանոններ՝ ապահովելու համար, որ անհրաժեշտ կարողություններ ունեցող ցանկացած անձ կարող է դիմել ածխաջրածինների հետախուզման, երկրաբանական որոնման և արդյունահանման համար թույլտվություն ստանալու համար. քանի որ թույլտվությունները պետք է շնորհվեն անկողմնակալ, հրապարակային չափանիշների հիման վրա. քանի որ ընթացակարգին մասնակցող բոլոր անձինք պետք է նախօրոք տեղեկանան այն պայմաններին, որոնց հիման վրա թույլտվությունները շնորհվել են,

քանի որ անդամ պետությունները պետք է հնարավորություններ ունենան սահմանափակելու այս գործողությունների մատչելիությունն ու իրականացումը հանրության շահերից բխող պատճառներով և տվյալ ներդրումների մանրամասն միջոցառումները ենթարկելու ֆինանսական միջոցների կամ ածխաջրածինների համար կատարվող ներդրումների վճարներին, որոնք պետք է ամրագրվեն այնպես, որ չմիջամտեն անձանց ղեկավարմանը. քանի որ այս հնարավորությունները պետք է օգտագործվեն խտրականությունը բացառող ձևով. քանի որ, բացառությամբ հնարավորությունների օգտագործման հետ կապված պարտականությունների, պետք է քայլեր ձեռնարկվեն՝ խուսափելու համար անձանց նկատմամբ պայմաններ և պարտականություններ կիրառելուց, որոնք հիմնավորված չեն այս աշխատանքը պատշաճ կատարելու կարիքով. քանի որ անձանց գործողությունները պետք է մոնիտորինգի ենթարկվեն միայն հույժ անհրաժեշտության դեպքում՝ ապահովելու համար դրանց համապատասխանությունը այս պարտականություններին և պայմաններին,

քանի որ թույլտվության և թույլտվության տևողության սահմանները պետք է սահմանափակվեն՝ նպատակ ունենալով կանխելու բացառիկ իրավունքի վերապահումը միակ անձին այն ոլորտում, որը կարող է ավելի արդյունավետորեն հետախուզվել, երկրաբանական որոնման ենթարկվել և արդյունահանվել մի քանի անձանց ներգրավված լինելու դեպքում,

քանի որ անդամ պետությունների անձանց երրորդ երկրներում պետք է ցուցաբերվի միևնույն վերաբերմունքը, որը ցուցաբերվում է երրորդ երկրների անձանց Համայնքում՝ սույն Հրահանգի ուժով. քանի որ անհրաժեշտ է այս կապակցությամբ ընթացակարգ սահմանել,

քանի որ սույն Հրահանգը պետք է կիրառվի այն թույլտվությունների նկատմամբ, որոնք շնորհվել են այն օրվանից հետո, մինչև երբ անդամ պետությունները պետք է ուժի մեջ դնեին սույն Հրահանգին համապատասխանելու համար անհրաժեշտ օրենքները, կանոնակարգերը և վարչական ակտերը,

քանի որ «Ջրի, էներգետիկայի, տրանսպորտի և հեռահաղորդակցության ոլորտներում գործող անձանց գնումների կարգի մասին» Խորհրդի 1990 թվականի սեպտեմբերի 17–ի 90/531/ԵՏՀ հրահանգը (1) և Ջրի, էներգետիկայի, տրանսպորտի և հեռահաղորդակցության ոլորտներում գործող անձանց գնումների կարգը համակարգող՝ Խորհրդի 1993 թվականի հունիսի 14–ի 93/38/ԵՏՀ հրահանգը (2) կիրառվում են էներգետիկայի ոլորտում գործող անձանց նկատմամբ, երբ խոսքը վերաբերում է նրանց կողմից իրականացվող մատակարարումների, աշխատանքների և ծառայությունների ձեռք բերմանը. քանի որ 90/531/ԵՏՀ հրահանգի 3–րդ հոդվածում նշված այլընտրանքային միջոցների կիրառումը, մասնավորապես, այնպիսի պայման է նախատեսում, որ այս միջոցների կիրառումը պահանջող անդամ պետությունում թույլտվությունները շնորհվեն խտրականությունը բացառող և թափանցիկ եղանակով. քանի որ անդամ պետությունն այս պայմանը բավարարում է այն պահից, երբ այն համապատասխանում է սույն Հրահանգի պահանջներին և այնքան ժամանակ, քանի դեռ այն համապատասխանում է սույն Հրահանգի պահանջներին. քանի որ սա, համապատասխանաբար, անհրաժեշտ է 90/531/ԵՏՀ հրահանգը փոփոխելու համար,

քանի որ 90/531/ԵՏՀ հրահանգի 36–րդ հոդվածը այդ հրահանգի կիրառման ոլորտը չորս տարվա ընթացքում վերանայելու հնարավորություն է ընձեռում՝ հաշվի առնելով շուկայի բացմանը և մրցակցության մակարդակի առաջընթացին վերաբերող զարգացումները:

Կիրառման ոլորտի վերանայումը ներառում է ածխաջրածինների հետազոտումն ու արդյունահանումը,

քանի որ Դանիան հատուկ իրավիճակում է այն փաստի պատճառով, որ այն պարտավոր է 2012 թվականի հուլիսի 8-ին որոշ տարածքները հանձնելու վերաբերյալ 1962 թվականի հուլիսին կնքված կոնցեսիոն պայմանագրի ժամկետի լրանալուց հետո բանակցությունների մեջ մտնել գործողությունների հնարավոր շարունակության վերաբերյալ և այն պատճառով, որ Դանիայի շահերը, կապված այդ տարածքների հետ, այդպիսով կհամարվեն սահմանափակված,

ԸՆԴՈՒՆԵՑԻՆ ՍՈՒՅՆ ՀՐԱՀԱՆԳԸ.

Հոդված 1

Սույն Հրահանգի իմաստով՝

1. «իրավասու մարմիններ» նշանակում է՝ 90/531/ԵՏՀ հրահանգի 1 (1) հոդվածով նախատեսված պետական մարմիններ, որոնք պատասխանատու են թույլտվության շնորհման և (կամ) դրանց օգտագործումը մոնիտորինգի ենթարկելու համար:
2. «անձ» նշանակում է՝ ֆիզիկական կամ իրավաբանական որևէ անձ կամ նման անձանցից կազմված որևէ խումբ, որը դիմում է, կարող է դիմել թույլտվություն ստանալու համար կամ ունի թույլտվություն:
3. «թույլտվություն» նշանակում է՝ որևէ օրենք, կանոնակարգ, վարչական կամ պայմանագրային դրույթ կամ դրա ներքո տրված փաստաթուղթ, որով անդամ պետության իրավասու մարմինները որևէ անձի լիազորում են իր անունից և իր ռիսկով աշխարհագրական տարածքում իրականացնելու ածխաջրածինների հետախուզման, երկրաբանական որոնման և արդյունահանման բացառիկ իրավունքը: Թույլտվությունը կարող է շնորհվել յուրաքանչյուր գործողության համար առանձին կամ մի քանի գործողությունների համար միաժամանակ:
4. «հասարակական կազմակերպություն» նշանակում է՝ 90/531/ԵՏՀ հրահանգի 1 (2) հոդվածով նախատեսված հանրային կազմակերպություն:

Հոդված 2

1. Անդամ պետություններին իրավունք է վերապահում իրենց տարածքում որոշելու այն վայրերը, որտեղ կարող են իրականացվել ածխաջրածինների հետախուզման, երկրաբանական որոնման և արդյունահանման գործողությունները:

2. Եթե 1-ին պարբերության մեջ նշված գործողությունների իրականացման համար տարածք է հատկացվում, անդամ պետությունները պետք է ապահովեն, որ անձանց միջև այս գործողությունների մատչելիության և իրականացման մասով խտրականություն չլինի:

Այնուամենայնիվ, անդամ պետությունները կարող են, ազգային անվտանգության հիմքերով, հրաժարվել թույլ տալու, որ այս գործողությունները հասանելի լինեն կամ իրականացվեն մի անձի համար կամ կողմից, որին արդյունավետորեն հսկում են երրորդ երկիրը կամ երրորդ երկրի քաղաքացիները:

Հոդված 3

1. Անդամ պետություններն անհրաժեշտ միջոցներ են ձեռնարկում ապահովելու համար, որ թույլտվությունները տրվեն այն ընթացակարգից հետո, ըստ որի բոլոր շահագրգիռ անձինք կարող են դիմում ներկայացնել՝ համաձայն կամ 2-րդ կամ 3-րդ պարբերությունների:

2. Այս ընթացակարգը նախաձեռնվում է՝

ա) կամ իրավասու մարմինների նախաձեռնությամբ ծանոթագրության միջոցով, որը կոչ է անում հրապարակելու դիմումները Եվրոպական համայնքների պաշտոնական տեղեկագրում՝ դիմումների ներկայացման վերջին օրից առնվազն իննսուն օր առաջ,

բ) կամ ծանոթագրության միջոցով, որը կոչ է անում հրապարակելու դիմումները Եվրոպական համայնքների պաշտոնական տեղեկագրում՝ կազմակերպության կողմից դիմումի ներկայացումից հետո՝ չհակասելով 2 (1) հոդվածին: Այլ շահագրգիռ անձինք հրապարակումից հետո դիմում ներկայացնելու համար առնվազն իննսուն օր ժամանակ կունենան:

Ծանոթագրությունները պետք է մանրամասնեն թույլտվության տեսակը, մասամբ կամ ամբողջությամբ այն աշխարհագրական տարածքը կամ տարածքները, որոնց համար դիմում է ներկայացվել կամ կարող է ներկայացվել, ինչպես նաև թույլտվություն շնորհելու ենթադրյալ ամսաթիվը կամ ժամկետը:

Եթե բացառապես ֆիզիկական կամ իրավաբանական անձանց կողմից ներկայացված դիմումներին հղում է արված, ապա ծանոթագրության մեջ պետք է նշվի այդ մասին:

3. Անդամ պետությունները կարող են թույլտվություններ շնորհել՝ չնախաձեռնելով 2-րդ պարբերությամբ նախատեսված ընթացակարգը, եթե այն տարածքը, որի համար թույլտվությունը հայցվում է՝

ա) մատչելի է մշտական հիմունքով կամ

բ) 2-րդ պարբերությամբ նախատեսված նախորդ ընթացակարգի առարկա է եղել, որը չի հանգեցրել թույլտվության շնորհման կամ

գ) հանձնվել է որևէ անձի կողմից և մեխանիկորեն չի պատկանում (ա) կետին:

Սույն պարբերությունը կիրառել ցանկացող անդամ պետությունը պետք է սույն Հրահանգն ընդունելու երեք ամիսների ընթացքում կամ այն անդամ պետությունների դեպքում, որոնք դեռ նման ընթացակարգեր չեն ներկայացրել, առանց ուշացման, ծանոթագրություն կազմեն Եվրոպական համայնքների պաշտոնական տեղեկագրում հրապարակելու համար՝ այդտեղ նշելով իրենց տարածքներում այն վայրերը, որոնք մատչելի են, համաձայն սույն պարբերության, և որտեղ հնարավոր է այդ մասին տեղեկություններ գտնել: Այս տեղեկությունների մեջ կատարված ցանկացած էական փոփոխություն հավելյալ ծանոթագրություն է պահանջում: Այնուամենայնիվ, թույլտվություն ստանալու ոչ մի դիմում չի կարող հաշվի առնվել՝ համաձայն սույն պարբերության, մինչև սույն տեքստի համաձայն համապատասխան ծանոթագրություն չհրապարակվի:

4. Անդամ պետությունը կարող է որոշել չկիրառել 1-ին պարբերության դրույթները, եթե, ինչպես նաև քանի դեռ, աշխարհագրական կամ արտադրական նկատառումները հիմնավորում են սահմանակից տարածքի համար թույլտվություն ունեցող անձին այդ տարածքի համար թույլտվություն շնորհելը: Տվյալ անդամ պետությունն ապահովում է, որ ցանկացած այլ սահմանակից տարածքների նկատմամբ թույլտվություն ունեցողները կարողանան նման դեպքում դիմումներ ներկայացնել և բավարար ժամանակ ստանալ դրա համար:

5. 1-ին պարբերության իմաստով հետևյալները չեն համարվում որպես թույլտվության շնորհում՝

ա) թույլտվության շնորհում միայն գոյություն ունեցող թույլտվություն ունեցող անձի անվան կամ սեփականության իրավունքի փոփոխության պատճառով, անդ անձի կառուցվածքային փոփոխության կամ թույլտվության փոխանցման պատճառով,

բ) թույլտվության շնորհում մի անձի, որն ունի այլ ձևի թույլտվություն, երբ վերջին թույլտվություն ունենալը ենթադրում է նախորդ թույլտվության շնորհումը,

գ) իրավասու մարմինների որոշումը, որը կայացվել է թույլտվության շրջանակում (անկախ այն հանգամանքից՝ արդյոք 14-րդ հոդվածում ամրագրված ամսաթվից առաջ նման թույլտվություն շնորհվել է, թե՛ ոչ) և վերաբերում է գործողությունների սկսվելուն, ընդհատմանը, երկարաձգմանը կամ դադարին կամ հենց թույլտվության ժամկետի երկարաձգմանը:

6. Անկախ 2-րդ պարբերության մեջ հիշատակված ընթացակարգերի նախաձեռնումից՝ անդամ պետություններին հնարավորություն է ընձեռվում հրաժարվելու թույլտվություն շնորհելուց՝ ապահովելով, որ դա կազմակերպությունների միջև խտրականություն չի առաջացնի:

Հոդված 4

Անդամ պետությունները անհրաժեշտ միջոցներ են ձեռնարկում՝ ապահովելու, որ

ա) եթե աշխարհագրական տարածքները սահմանազատված չեն տարածքի նախնական երկրաչափական բաժանման հիման վրա, ապա յուրաքանչյուր տարածքի չափսը որոշվի այնպես, որ այն տեխնիկական և տնտեսական տեսանկյուններից չգերազանցի գործողությունների հնարավորինս լավագույն իրականացման համար նախատեսված տարածքի չափսերը: 3 (2) հոդվածով նախատեսված ընթացակարգերից հետո շնորհված թույլտվությունների դեպքում սահմանվեն չափորոշիչներ և, նախքան դիմումները ներկայացնելը, դրանք մատչելի դարձվեն անձանց համար,

բ) թույլտվության գործողության ժամկետը չգերազանցի այն գործողությունների իրականացման համար անհրաժեշտ ժամանակը, որոնց համար թույլտվությունը շնորհվել է: Այնուամենայնիվ, իրավասու մարմինները կարող են երկարաձգել թույլտվության ժամկետը, եթե նախատեսված տևողությունը բավարար չէ նշված գործողությունն իրականացնելու համար և եթե գործողությունն իրականացվել է թույլտվության համաձայն,

գ) անձինք չպահպանեն բացառիկ իրավունքներն ավելի երկար ժամանակով, քան անհրաժեշտ է թույլ տրված գործողություններն իրականացնելու համար աշխարհագրական այն տարածքներում, որոնց համար նրանք թույլտվություն են ստացել:

Հոդված 5

Անդամ պետություններն անհրաժեշտ միջոցներ են ձեռնարկում՝ ապահովելու, որ՝

1. թույլտվությունները շնորհվեն այն չափորոշիչների հիման վրա, որոնք, բոլոր դեպքերում, վերաբերում են՝

ա) կազմակերպությունների տեխնիկական և ֆինանսական կարողություններին և

բ) այն ձևին, որը նրանք առաջարկում են տվյալ աշխարհագրական տարածքում հետախուզում, երկրաբանական որոնում և արդյունահանում իրականացնելու համար,

և, անհրաժեշտության դեպքում՝

գ) եթե թույլտվությունը հանվում է վաճառքի, ապա այն գնին, որը անձը պատրաստ է վճարել այդ թույլտվությունը ձեռք բերելու համար,

դ) եթե (ա), (բ) և, անհրաժեշտության դեպքում, (գ) չափորոշիչների համաձայն կատարված գնահատումը ցույց է տալիս, որ երկու և ավելի դիմումներ ունեն հավասար կարևորություն, ապա այլ համապատասխան անկողմնակալ և խտրականությունը բացառող չափորոշիչները, որպեսզի այս դիմումներից շրջանակում հնարավոր լինի վերջնական ընտրություն կատարել:

Իրավասու մարմինները կարող են, դիմումները գնահատելիս, հաշվի առնել նաև նախորդ թույլտվությունների համաձայն իրականացվող գործողություններում արդյունավետության և պատասխանատվության շրջանակում դիմողի կողմից ցուցաբերված ցանկացած բացթողումը:

Եթե իրավասու մարմինները որոշում են այն անձի բնույթը, ում նրանք կարող են թույլտվություն շնորհել, ապա նրանք որոշումը կայացնում են անկողմնակալ և խտրականությունը բացառող չափորոշիչների հիման վրա:

Եթե իրավասու մարմինները որոշում են այն անձի ներկայացուցչին, ում նրանք կարող են թույլտվություն շնորհել, ապա նրանք որոշումը կայացնում են անկողմնակալ և խտրականությունը բացառող չափորոշիչների հիման վրա:

Չափորոշիչները կազմվում են և հրապարակվում Եվրոպական համայնքների պաշտոնական տեղեկագրում նախքան դիմումները ներկայացնելու ժամկետի մեկնարկը: Անդամ պետությունները, որոնք արդեն հրապարակել են չափորոշիչներն իրենց պաշտոնական տեղեկագրերում, կարող են սահմանափակել Եվրոպական համայնքների պաշտոնական տեղեկագրում հրապարակումը՝ իրենց պաշտոնական տեղեկագրերում հրապարակելու վերաբերյալ հղումներ կատարելով: Այնուամենայնիվ, չափորոշիչների շրջանակում կատարված ցանկացած փոփոխություն ամբողջությամբ հրապարակվում է Եվրոպական համայնքների պաշտոնական տեղեկագրում:

2. գործողության իրականացման կամ կասեցման վերաբերյալ պայմանները և պահանջները, որոնք կիրառվում են թույլտվությունների յուրաքանչյուր տեսակի նկատմամբ՝ դիմումների ներկայացման պահին գործող օրենքներով, կանոնակարգերով և վարչական դրույթներով՝ անկախ այն հանգամանքից, դրանք ներառված են թույլտվության մեջ, թե հանդիսանում են պայմաններ, որոնք պետք է ընդունվեն նման թույլտվություն ստանալուց առաջ, սահմանվում են և ամբողջ ժամանակ հասանելի են դարձվում շահագրգիռ անձանց:

3 (2) (ա) հոդվածում նշված դեպքում, նրանք կարող են մատչելի դարձվել միայն այն օրվանից սկսած, երբ կարող են ներկայացվել թույլտվություն ստանալու համար դիմումները,

3. բոլոր շահագրգիռ անձինք տեղեկացվեն ընթացակարգի ընթացքում պայմանների և պահանջների մասով կատարված ցանկացած փոփոխությունների մասին,

4. սույն հոդվածում նշված չափորոշիչները, պայմաններն ու պահանջները կիրառվեն խտրականությունը բացառող եղանակով,

5. ցանկացած անձ, ում դիմումը թույլտվություն ստանալու համար անհաջող է, եթե անձը ցանկանում է այդպես, տեղեկացվի որոշման պատճառների մասին:

Հոդված 6

1. Անդամ պետություններն ապահովում են, որ 5 (2) հոդվածում նշված պայմաններն ու պահանջները, ինչպես նաև հատուկ թույլտվության գործածության վերաբերյալ մանրամասն պարտավորությունները լինեն հիմնավորված՝ ելնելով բացառապես թույլտվություն ձեռք

բերած տարածքում գործողությունների պատշաճ իրականացումն ապահովելու կարիքից՝ 2-րդ պարբերությունը կիրառելով կամ ֆինանսական միջոցներ կամ ածխաջրածինների համար կատարվող ներդրումներ վճարելով:

2. Անդամ պետությունները կարող են 2 (1) հոդվածում նշված գործողությունների իրականացման վերաբերյալ պայմաններ և պահանջներ սահմանել այնքանով, որքանով դա արդարացված է ազգային անվտանգությամբ, հանրային անվտանգությամբ, հանրային առողջապահությամբ, տրանսպորտային միջոցների անվտանգությամբ, շրջակա միջավայրի պաշտպանությամբ, կենսաբանական ռեսուրսների և գեղարվեստական, պատմական կամ հնեագիտական արժեք ներկայացնող ազգային հարստությունների պաշտպանությամբ, սարքավորումների և աշխատողների անվտանգությամբ, ածխաջրածնային ռեսուրսների պլանավորված կառավարմամբ (օրինակ՝ այն ցուցանիշը, թե ածխաջրածինները որքան են սպառվում կամ որքանով է օպտիմալացված դրանց վերականգնումը) կամ հարկային եկամուտներ ապահովելու անհրաժեշտությամբ:

3. 1-ին պարբերության մեջ նշված վճարումները կատարելու համար նախատեսված կանոնները՝ ներառյալ պետության մասնակցության համար անհրաժեշտ ցանկացած պահանջ, պետք է ամրագրվի անդամ պետությունների կողմից այնպես, որ հնարավոր լինի ապահովել, որ պահպանվի անձանց կառավարման անկախությունը:

Այնուամենայնիվ, եթե թույլտվությունների շնորհումը ենթադրում է պետության մասնակցությունը գործողություններին և եթե իրավաբանական անձին վերապահվել է կառավարել այդ մասնակցությունը կամ եթե պետությունն ինքն է կարգավորում մասնակցությունը, ոչ իրավաբանական անձին ոչ էլ պետությանը չի արգելվում այդ մասնակցության հետ կապված իրավունքներ և պարտականություններ ստանձնելը՝ չխախտելով համարժեք մասնակցության կարևորությանը՝ պայմանով, որ իրավաբանական անձը կամ պետությունը չհանդիսանան տեղեկություններ տրամադրող կողմ, չկիրառեն ընտրական իրավունքներ այն որոշումների նկատմամբ, երբ խոսքը վերաբերում է անձանց համար գնումներ կատարելու աղբյուրներին, իրավաբանական անձը կամ հանրային կառույցի կամ կառույցների հետ համագործակցող պետությունը չկիրառի ձայնի մեծամասնության իրավունքը այլ որոշումների նկատմամբ և որ պետության կամ իրավաբանական անձի կողմից ցանկացած ձայն հիմնված լինի բացառապես թափանցիկության, անկողմնակալության և խտրականությունը բացառող սկզբունքների հիման վրա և չխոչընդոտի, որ կառավարման վերաբերյալ անձի որոշումը հիմնված լինի առևտրային նորմալ սկզբունքների հիման վրա:

Այնուամենայնիվ, նախորդ ենթապարբերության դրույթները չպետք է խոչընդոտեն, որպեսզի իրավաբանական անձը կամ պետությունը առարկի թույլտվություն ունեցող անձանց կողմից կայացված որոշմանը, որոնք չեն հարգել թույլտվությամբ սահմանված պայմաններն ու պահանջները, որոնք վերաբերում են սպառման քաղաքականությանն ու պետության ֆինանսական շահերի պաշտպանությանը:

Որոշումն առարկելու տարբերակն իրականացվում է խտրականությունը բացառող ձևով, մասնավորապես, երբ խոսքը վերաբերում է ներդրումների վերաբերյալ որոշումներին և անձանց մատակարարման աղբյուրներին: Եթե պետության մասնակցությունը գործողություններին կարգավորվում է իրավաբանական անձի կողմից, ով նաև թույլտվություն ունի, անդամ պետությունը ձեռնարկում է միջոցառումներ, որոնք պահանջում են, որ իրավաբանական անձը առանձին հաշիվներ վարի իր առևտրային դերի և պետության մասնակցության հետ կապված հարցերով կառավարողի իր դերի վերաբերյալ՝ երաշխավորելով, որ պետության մասնակցության հարցերի կարգավորման համար պատասխանատու իրավաբանական անձը տեղեկատվություն չտրամադրի սեփական իրավունքով թույլտվություններ ունեցող իրավաբանական անձին: Այնուամենայնիվ, եթե պետության մասնակցության հարցերի կարգավորման համար պատասխանատու իրավաբանական անձը թույլտվություն ունեցող իրավաբանական անձին վարձում է որպես խորհրդատու, առաջինը կարող է մատչելի դարձնել ցանկացած տեղեկություն, որն անհրաժեշտ է խորհրդատվական աշխատանքներն իրականացնելու համար: Այն անձինք, ովքեր ունեն բոլոր այն թույլտվությունները, որոնց վերաբերում են տեղեկությունները, նախապես տեղեկացվում են, թե ինչ տեղեկություններ պետք է տրվեն այս ձևով, ինչպես նաև նրանց բավարար ժամանակ է տրվում առարկություններ անելու համար:

4. Անդամ պետություններն ապահովում են, որ թույլտվություն ունեցող անձանց մոտիտորինգը սահմանափակվի այնքանով, որքանով դա անհրաժեշտ է՝ ապահովելու համար համապատասխանությունը 1-ին պարբերության մեջ նշված պայմանների, պահանջների և պարտականությունների հետ: Մասնավորապես, նրանք ձեռնարկում են միջոցներ, որոնք անհրաժեշտ են ապահովելու համար, որ որևէ օրենքով, կանոնակարգով կամ վարչական պահանջով կամ որևէ համաձայնագրով կամ նախաձեռնությամբ ոչ մի անձից չի պահանջվում տեղեկություններ տրամադրել իր նախատեսած կամ իրականում գոյություն ունեցող գնումների աղբյուրների մասին՝ բացառությամբ իրավասու մարմինների կողմից պահանջի դեպքում և բացառապես Պայմանագրի 36-րդ հոդվածով նախատեսված նպատակների մասով:

Հոդված 7

Չխախտելով առանձին թույլտվություններին վերաբերող կամ դրանց մեջ ներառված դրույթները, ինչպես նաև 3 (5) (բ) հոդվածի դրույթները՝ անդամ պետությունները վերացնում են անդամ պետության տարածքում կոնկրետ աշխարհագրական տարածքի նկատմամբ մեկ անձի թույլտվություն վերապահող իրավաբանական, կարգավորիչ և վարչական դրույթները՝ սկսած 1997 թվականի հունվարի 1-ից:

Հոդված 8

1. Անդամ պետությունները Հանձնաժողովին տեղեկացնում են ընդհանուր բնույթի ցանկացած այնպիսի փոփոխության մասին, որոնց դե ֆակտո կամ դե յուրե բախվել են երրորդ երկրներում ածխաջրածինների հետախուզման, երկրաբանական որոնման և արդյունահանման հետ առնչվող կամ այդ գործողություններն իրականացնող անձինք, որոնք ներկայացվել են նրանց ուշադրությանը: Անդամ պետությունները և Հանձնաժողովն ապահովում են հարգանքն առևտրային գաղտնիքի նկատմամբ:

2. Հանձնաժողովը, մինչև 1994 թվականի դեկտեմբերի 31-ը, իսկ դրանից հետո պարբերաբար զեկույց է ներկայացնում Եվրոպական պառլամենտին և Խորհրդին երրորդ երկրներում գործող անձանց վիճակի մասին, ինչպես նաև այդ երկրների հետ կամ միջազգային կազմակերպությունների շրջանակում 3-րդ պարբերության համաձայն ձեռնարկված բանակցությունների մասին:

3. Եթե Հանձնաժողովը, հիմնվելով 2-րդ պարբերության մեջ նշված զեկույցի կամ այլ տեղեկատվության վրա, պարզի, որ երրորդ երկիրը, կապված 1-ին պարբերության մեջ նշված գործողությունների մատչելիության կամ իրականացման հետ, Համայնքի անձանց նկատմամբ չի ցուցաբերում նույնպիսի վերաբերմունք, ինչպիսին ցուցաբերում է Համայնքը երրորդ երկրների անձանց նկատմամբ, ապա Հանձնաժողովը կարող է Համայնքին բանակցություններ վարելու համար համապատասխան մանդատ տրամադրելու առաջարկ ներկայացնել՝ նպատակ ունենալով Համայնքի անձանց համար համարժեք մրցակցային հնարավորություններ ստեղծելու: Խորհուրդը դրա վերաբերյալ որոշումը կայացնում է ձայների որակյալ մեծամասնությամբ:

4. 3-րդ պարբերության մեջ նկարագրված հանգամանքներում, Հանձնաժողովը կարող է ցանկացած ժամանակ առաջարկել, որ Խորհուրդը մեկ կամ ավելի անդամ պետությունների

լիազորի հրաժարվելու թույլտվություն տալ այն անձին, որին արդյունավետորեն հսկում է երրորդ երկիրը և (կամ) տվյալ երրորդ երկրի քաղաքացիները:

Հանձնաժողովը կարող է նման առաջարկ ներկայացնել իր նախաձեռնությամբ կամ անդամ պետության խնդրանքով:

Խորհուրդը հնարավորինս շուտ որոշում է կայացնում ձայների որակյալ մեծամասնությամբ:

5. Սույն հոդվածի համաձայն ձեռնարկված միջոցները չեն հակասում Համայնքի ստանձնած պարտավորություններին միջազգային որևէ համաձայնագրերով, որոնք կարգավորում են ածխաջրածինների հետախուզման, երկրաբանական որոնման և արդյունահանման գործողությունների իրականացման մատչելիությունը:

Հոդված 9

Յուրաքանչյուր անդամ պետություն կազմում է տարեկան հաշվետվություն և այն փոխանցում Հանձնաժողովին, որը ներառում է տեղեկություններ աշխարհագրական այն տարածքների վերաբերյալ, որոնք բաց են հետախուզման, երկրաբանական որոնման և արդյունահանման, շնորհված թույլտվությունների, թույլտվություններ ունեցող անձանց և դրանց կառուցվածքի համար, ինչպես նաև իր տարածքում գնահատված պաշարների համար:

Սույն դրույթն անդամ պետությունների համար առևտրային գաղտնիք կազմող որևէ տեղեկություն հրապարակելու ոչ մի պարտականություն չի նախատեսում:

Հոդված 10

Անդամ պետություններն իրավասու մարմինների մասին Հանձնաժողովին ծանուցում են ոչ ուշ, քան մինչև 1995 թվականի մայիսի 1-ը: Անդամ պետություններն առանց հապաղելու Հանձնաժողովին տեղեկացնում են հետագա ցանկացած փոփոխությունների մասին: Հանձնաժողովը Եվրոպական համայնքների պաշտոնական տեղեկագրում հրապարակում է իրավասու մարմինների ցուցակը և այդ ցուցակում կատարվող ցանկացած փոփոխությունները:

Հոդված 11

Սույն Հրահանգը տարածվում է այն թույլտվությունների նկատմամբ, որոնք շնորհվել են սկսած 14-րդ հոդվածում նշված ամսաթվից:

Հոդված 12

90/531/ԵՏՀ հրահանգի 3-րդ հոդվածը լրացնել հետևյալ պարբերությունով՝

'5. Ինչ վերաբերում է նավթի կամ գազի հետախուզման կամ արդյունահանման նպատակներով աշխարհագրական տարածքների շահագործմանը, կիրառվում են 1-4-րդ պարբերությունները՝ սկսած այն օրվանից, երբ տվյալ անդամ պետությունը կատարում է «Ածխաջրածինների հետախուզման, երկրաբանական որոնման և արդյունահանման համար թույլտվությունների տրամադրման և օգտագործման պայմանների մասին» Եվրոպական պառլամենտի և Խորհրդի մայիսի 30-ի 94/22/ԵՀ հրահանգի դրույթները (*):

ա) 1-ին պարբերության մեջ նշված պայմանները համարվում են բավարարված՝ ուժի մեջ մտնելով այդ օրվանից՝ չհակասելով 3-րդ պարբերությանը,

բ) այդ օրվանից ուժի մեջ մտնելով՝ 4-րդ պարբերության մեջ նշված անդամ պետությունը պետք է տեղեկացնի միայն այն դրույթների մասին, որոնք վերաբերում են 2-րդ և 3-րդ պարբերություններում նշված պայմանների հետ համապատասխանությանը:

*) ՊՏ թիվ L 164, 30.06.1994թ., էջ 3:

Հոդված 13

3-րդ և 5-րդ հոդվածների դրույթները չեն տարածվում Դանիայի կողմից մինչև 2012 թվականի դեկտեմբերի 31-ը շնորհված նոր թույլտվությունների վրա՝ այն տարածքների մասով, որոնք, 1962 թվականի հուլիսի 8-ին շնորհված թույլտվության ժամկետի ավարտից հետո, 2012 թվականի հուլիսի 8-ին հանձնվելու են: Նոր թույլտվությունները շնորհվում են անկողմնակալության և խտրականությունը բացառող սկզբունքների հիման վրա:

Համապատասխանաբար, սույն հոդվածը անդամ պետությունների համար նախադեպ չի ստեղծում:

Հոդված 14

Անդամ պետությունները գործողության մեջ են դնում սույն Հրահանգի կիրարկման համար անհրաժեշտ օրենքները, կանոնակարգերն ու վարչական ակտերը մինչև 1995 թվականի հուլիսի 1-ը: Նրանք այդ մասին անմիջապես տեղեկացնում են Հանձնաժողովին:

Երբ անդամ պետությունները ձեռնարկեն այս միջոցները, դրանք պետք է պարունակեն սույն Հրահանգին արված հղում կամ նրանց պետք է կցված լինի նման հղում իրենց պաշտոնական հրապարակման պահին: Նման հղում կատարելու մեթոդները սահմանվում են անդամ պետությունների կողմից:

Հոդված 15

Սույն Հրահանգն ուժի մեջ է մտնում Եվրոպական համայնքների պաշտոնական տեղեկագրում հրապարակվելու օրվանից:

Հոդված 16

Սույն Հրահանգը հասցեագրված է անդամ պետություններին:

Կատարված է Բրյուսելում, 1994 թվականի մայիսի 30-ին:

Եվրոպական պառլամենտի կողմից՝

Նախագահ

Է. ԿԼԵՊՇ

Խորհրդի կողմից՝

Նախագահ

Կ. ՍԻՄԻՏԻՍ

1) ՊՏ թիվ C 139, 02.06.1992թ., էջ 12:

2) ՊՏ թիվ C 19, 25.01.1993թ., էջ 128:

3) Եվրոպական պառլամենտի 1992 թվականի նոյեմբերի 18-ի եզրակացություն (ՊՏ թիվ C 337, 21.12.1992թ., էջ 145): Խորհրդի 1993 թվականի դեկտեմբերի 22-ի ընդհանուր դիրքորոշում (ՊՏ թիվ C 101, 09.04.1994թ., էջ 14) և Եվրոպական պառլամենտի 1994 թվականի մարտի 9-ի որոշում (Պաշտոնական տեղեկագրում դեռ չի հրապարակվել):

4) ՊՏ թիվ C 241, 25. 09. 1986թ., էջ 1:

1) ՊՏ թիվ L 297, 29.10.1990թ., էջ 1:

2) ՊՏ թիվ L 199, 09.08.1993թ., էջ 84: